ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի հոկտեմբերի 22-ին ժամը 11^{00} -ին հայտարարել Թումանյան համայնքի սեփականությունը հանդիսացող Թումանյան քաղաքի և Քարինջ բնակավայրի վարչական տարածքներում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերի աճուրդ-վաճառք և վարձակալության մրցույթ 2 լոտով:

Լոտ 1. Թումանյան համայնքի սեփականությունը հանդիսացող Թումանյան համայնք, Քարինջ գյուղում գտնվող կադաստրային քարտեզի 06-110-0112-0084 ծածկագրում գտնվող 0,54212 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող գործառնական նշանակության անշարժ գույքի աճուրդ-վաճառք: Մեկնարկային գին սահմանել 1500000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Լոտ 2. Թումանյան համայնքի սեփականությունը հանդիսացող Թումանյան համայնք, Թումանյան քաղաքի կադաստրային քարտեզի 06-004-0050-0006 ծածկագրում գտնվող 0,01729 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք գործառնական նշանակության անշարժ գույքի վարձակալության մրցույթ 25 տարի ժամկետով:Մեկնարկային գինը սահմանել տարեկան 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ:

2. Հողամասերի աճուրդի մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50%– ի չափով, իսկ մրցույթի վարձակալության նախավճարի չափը սահմանել մենարկային գնի 5%–ի չափով, աճուրդի և մրցույթի մասնակցության վճարը՝ 10000 ՀՀ դրամ, քայլի չափը՝ մեկնարկային գնի 5%-ի չափով: Հողամասերի նկատմամբ սահմանափակումներ և սերվիտուտներ չկան:Հողամասերի որակական հատկանիշները՝ հարթ և թեք ռելիեֆ:Աճուրդի մասնակիցներն աճուրդի անցկացման օրը մուծում են նախավճար՝ տվյալ հողամասի մեկնարկային գնի 50% -ի չափով, իսկ մրցույթի մասնակիցները՝ տվյալ հողամասի մեկնարկայինգնի 5% -ի չափով: Եթե մասնակիցն աճուրդի կամ մրցույթի արդյունքներով չի հաղթել, նախավճարը վերադարձվում է նրան: Եթե մասնակիցը հաղթել է, ապա նախավճարի գումարը ներառվում է վաճառքի գնի մեջ: Աճուրդում և մրցույթում հաղթող է ճանաչվում ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը: Աճուրդին և մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն հայտ, մասնակցության վճարի անդորրագիր և անձնագրի պատճեն:

3. Աճուրդի և մրցույթի պայմաններին ծանոթանալու և լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Թումանյանի համայնքապետարան՝ ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, ք. Թումանյան, Կենտրոնական 1: Հայտերի ընդունումը դադարեցվում է աճուրդի և մրցույթի անցկացման օրվանից 3 /երեք/ աշխատանքային օր առաջ:

Հեռախոս՝ 098-048-046